ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի հուլիս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2019 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 35092.5 մլն դրամ՝ պլանավորված 31650.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 10.9 տոկոսով կամ 3442.5 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 11.4 տոկոսով կամ 3601.1 մլն դրամով:

Հուլիս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 5076.1 մլն դրամ՝ պլանավորված 4750.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 6.9 տոկոսով կամ 326.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 11.9 տոկոսով կամ 540.5 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 133 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 15 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 30 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 40.5 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 21 ստուգում՝ 39.8 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների» հայեցակարգի շրջանակներում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում հաշվետու ամսում արձանագրվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման և վարձու աշխատողների չձևակերպման 1-ական դեպք:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 98 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 67-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 2-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 7-ը՝

ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, 8-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման և 14 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ավարտվել են բռնագանձման հայցերով 1 գործ՝ 3191.2 հազ. դրամ գումարով, վճարման կարգադրության հայցերով 7 գործ՝ 167.0 հազ. դրամ գումարով, 1 սնանկության գործ՝ 3670.3 հազ. դրամ գումարով և 1 գույքի փայաբաժնի առանձնացման գործ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 76 վարչական գործով սահմանվել է 1.1 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 9496 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 7871:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 76 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում հուլիս ամսում կատարվել է վերադարձ 186 վարձու աշխատողի՝ 29.4 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հաշվետու ամսում գործունեությունը նոր սկսող 42 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության կողմից հաստատվել են «Ռոյալթի վճարողների կողմից խտանյութի իրացման շրջանառության առավելագույն սահմանաչափերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 12-ի N 122-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ու «Մակաբացման աշխատանքների գծով ծախսերի՝

արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքին վերագրման կարգը սահմանելու մասին» որոշումները:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Հաշվետու ամսում Արցախ են այցելել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների և միջազգային հարաբերությունների վարչությունների աշխատակիցները՝ կոմիտեի նախագահի տեղակալ Միքայել Փաշայանի ղեկավարությամբ: Այցի շրջանակներում Արցախի և Հայաստանի հարկային մարմինների աշխատակիցները ներկայացրել են շնորհանդեսներ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ունեցած ձեռքբերումների վերաբերյալ, քննարկվել ընդհանուր նպատակներին հասնելու գործում թիմային աշխատանքի անհրաժեշտությունը՝ ուղղված անձնային որակների բացահայտմանը, թիմային աշխատանքի հմտությունների և աշխատակիցների միջև արդյունավետ փոխգործակցության զարգացմանը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հուլիսի 1-ից գործարկվել են էլեկտրոնային հարկային հաշիվների դուրսգրման և սոցիալական վճարների ավտոմատ հաշվառման համակարգերը, որոնց հետ կապված ամենօրյա պարզաբանումներ են ներկայացվել հարկ վճարողների կողմից բարձրացվող հարցերին:

Հանրային իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով: Մասնավորապես, կայքէջի «Հաճախ տրվող հարցերի և պատասխանների շտեմարան» բաժնում տեղադրվել են «Սոցիալական վճարների և կուտակային հատկացումների վերաբերյալ» հարց ու պատասխանները:

Հաշվետու ամսում ֆինանսների նախարարության ու աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի նախաձեռնությամբ կազմակերպվել են սեմինար-դասընթացներ՝ «Շահութահարկեր» հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ թեմայով, որոնց մասնակցել են մասնավոր հատվածում գործունեություն իրականացնող կազմակերպությունների ու 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների շուրջ 70 հաշվապահներ:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով կայքում հրապարակվել է առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկը:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել 1 հայտարարություն:

Հուլիս ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 190, ելքագրվել՝ 118 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 6 գրություն, որից 3-ը՝ էլեկտրոնային եղանակով: